ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2



HABITUS 2

NATIONAL ACADEMY OF SCIENCES RA
INSTITUTE OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY

**PROCEEDINGS OF THE INSTITUTE
OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY
2**

H A B I T U S

STUDIES IN ANTHROPOLOGY
AND ARCHAEOLOGY

2

НАЦИОНАЛЬНАЯ АКАДЕМИЯ НАУК РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ИНСТИТУТ АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ

**ТРУДЫ ИНСТИТУТА
АРХЕОЛОГИИ И ЭТНОГРАФИИ
2**

H A B I T U S

АНТРОПОЛОГИЧЕСКИЕ И АРХЕОЛОГИЧЕСКИЕ
ИССЛЕДОВАНИЯ

2

«GITUTYUN» PUBLISHING HOUSE
YEREVAN 2017

ИЗДАТЕЛЬСТВО «ГИТУТЮН»
ЕРЕВАН 2017

ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2

Հ Ա Բ Ի Տ Ո Ւ Մ

ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱԱ «ԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

ՀՏԴ 902/904
ԳՄԴ 63.4
Հ 125

Տպագրվում է ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ.
Պավել Ավետիսյան (*գլխավոր խմբագիր*), Լևոն Աբրահամյան, Գրեգորի Արեշյան, Ռուբեն Բադալյան, Պիտեր Քաուի, Տորք Դալալյան (*պատասխանատու քարտուղար*), Պատրիկ Տօնապետեան, Միհրան Գալստյան, Սարգիս Հարությունյան, Թամար Հայրապետյան, Լորի Խաչատուրեան, Թեո վան Լինտ, Հարություն Մարության, Արմեն Պետրոսյան, Համլետ Պետրոսյան, Գագիկ Սարգսյան, Ադամ Սմիթ, Ջուստո Տրաինա

Editorial Board:
Pavel Avetisyan (*editor-in-chief*), Levon Abrahamian, Gregory Areshian, Rouben Badalian, Peter Cowe, Tork Dalalyan (*assistant editor*), Patrick Donabédian, Mihran Galsyan, Sargis Harutyunyan, Tamar Hayrapetyan, Lori Khatchadourian, Theo van Lint, Harutyun Marutyan, Armen Petrosyan, Hamlet Petrosyan, Gagik Sargsyan, Adam Smith, Giusto Traina

Համարի գրախոսներ՝
Հարություն Մարության, *պատմական գիտությունների դոկտոր*
Արսեն Բոբոխյան, *պատմական գիտությունների թեկնածու*

Համարի խմբագիրներ՝
Համլետ Մելքումյան, *պատմական գիտությունների թեկնածու*
Ռոման Հովսեփյան, *կենսաբանական գիտությունների թեկնածու*

Մարդաբանություն, հնագիտություն թեմատիկ երգիծանկարների հեղինակ՝ ազգագրագետ Լևոն Աբրահամյան

The volume is edited by Hamlet Melkumyan *and* Roman Hovsepyan
The cartoons are authored by Levon Abrahamyan, *anthropologist*

Հ 125 Հնագիտության և ազգագրության ինստիտուտի աշխատություններ 2: ՀԱԲԻ-ՏՈՒՍ 2: ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ. Խմբ. Հ. Մելքումյան, Ռ. Հովսեփյան – Եր.: Գիտություն, 2017. – 264 էջ:

ՀՏԴ 902/904
ԳՄԴ 63.4

ISBN 978-5-8080-1293-6

© ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2017 թ.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԱՐԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆՐԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐՈՒՄ ԻՆՔՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ

Սուսաննե Ֆիլինգս
Հայոց պատմությունը քաղաքային առօրեականության մեջ 10

Համլետ Մելքումյան
Հիշողությունից ազգայնականությո՞ւն,
խորհրդային և հետխորհրդային հուշարձանները 42

Էլեն Գրիգորյան
Եվրատեսիլ երգի մրցույթը որպես ինքնությունների,
ազգայնականության և քաղաքականության արտահայտման բեմ 65

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԱՌՕՐԵԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Լիլիթ Մանուկյան
Կյանքը դեֆիցիտի պայմաններում. կանացի հագուստի
պրակտիկաները Երևանում 1970-80-ականներին 93

ՍՓՅՈՒՌՔ ԵՎ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Էլլի Պոնոմարյովա
Բնիկ թիֆլիսցիներ թե՞ Սփյուռք. քննարկում թիֆլիսաբնակ
հայերի կարգավիճակի շուրջ 117

Սյուզաննա Բարսեղյան
Հայկական մամուլի դերը Սփյուռքում էթնոմշակութային արժեքների վերար-
տադրման և տարածման գործում 142

ՊԱՏԵՐԱԶՄ ԵՎ ԲՌՆԱԳԱՂԹ

Շուշանիկ Ղազարյան
ՀՀ-ում ադրբեջանահայ փախստականների ինտեգրման
գործընթացում հայերենի իմացության խնդիրը 152

Հասմիկ Գրիգորյան
Հայոց ցեղասպանությունից մինչև «քառօրյա պատերազմ».
բռնության օրինականացման մշակութային գործոնները 163

Լուսինե Տանաջյան
Սոցիալ-մասնագիտական ինտեգրման առանձնահատկությունները
Հայաստան ներգաղթած սիրիահայերի շրջանում 184

Սոնա Ներսիսյան
Ցանցային հարաբերությունները Հայաստան ներգաղթած սիրիահայերի շրջանում 195

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ռոման Հովսեփյան
Հնաբուսաբանական նմուշառում. դաշտային աշխատանքների ուղեցույց 212

Արթուր Պետրոսյան
Քարե գործիքների ուսումնասիրության մեթոդոլոգիան 217

Աննա Ազիզյան
Դիտողություններ Հայաստանի կուր-արաքսյան խեցեղենի հազվադեպ հանդիպող զարդաձևերի վերաբերյալ 238

Ավետիս Գրիգորյան
Սոթքի տարածաշրջանի անտիկ և միջնադարյան հուշարձանները 249

CONTENTS

CULTURAL ANTHROPOLOGY

IDENTITY AND NATIONALISM IN PUBLIC SPACES

Susanne Fehlings
Armenian History in Urban Everyday Life 10

Hamlet Melkumyan
From Memory to Nationalism?
The Soviet and post-Soviet Memorials in Rural Daily Life 42

Elen Grigoryan
Eurovision Song Contest as a Stage: Performing Identities,
Nationalism and Politics 65

SOVIET DAILY LIFE

Lilit Manukyan
Living in Deficiency: Female Clothing Practices in Yerevan in 1970-80s 93

DIASPORA AND NATIONALISM

Elli Ponomareva
Native Tbilisians or Diaspora: Negotiating the Status
of Armenians in Tbilisi 117

Syuzanna Barseghyan
The Role of Armenian Press in Reproduction and Dissemination
of Ethnic and Cultural Values in the Diaspora 142

WAR AND FORCED MIGRATION

Shushanik Ghazaryan
The Importance of Armenian Language in the process of integration
of Armenian refugees from Azerbaijan in Republic of Armenia 152

Hasmik Grigoryan
From The Armenian Genocide to the “4-Day War”
Cultural Factors of Violence Legalization 163

Lusine Tanajyan
Social-professional Features of Integration of Syrian-Armenian
Immigrants in Armenia 184

Sona Nersisyan
Network Relations among Syrian-Armenian Immigrants in Armenia 195

ARCHAEOLOGY

Roman Hovsepyan
Archaeobotanical sampling: Instructions for fieldwork 212

Artur Petrosyan
Methodology for the Study of Stone Artefacts 217

Anna Azizyan
Remarks on the Rare Ornaments of Kura-Araxes Ceramics of Armenia 238

Avetis Grigoryan
The History of Investigation of Antique
and Medieval Sites of the Sotk Region 249

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ



ARCHAEOLOGY

13

Աննա Ազիզյան

Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, ՀՀ ԳԱԱ

Դիտողություններ Հայաստանի կուր-արաքսյան խեցեղենի հազվադեպ հանդիպող զարդաձևերի վերաբերյալ

Հոդվածը նվիրված է վաղբրոնզեդարյան մշակույթում հազվադեպ հանդիպող զարդարման մոտեցումներին: Նման օրինակներ առայժմ մեզ հայտնի են Արագածից, Կառնուտից, Հառիճից, Մեծ Սեպասարից, Շենգավիթից, Շիրակավանից, Ջրաձորից, Ֆիոլետովոյից, Քեթիից: Այս եզակի օրինակների զարդաձևերը ակոսային են, ռելիեֆ, կատարված են սեղմելու-փոսիկավորելու նաև կոկման և գունազարդ եղանակներով: Պատկերվել են կարասների, կճուճների, քրեղանների, թասերի և այլ տիպի անոթների վրա: Ներկայացվածների շարքում աչքի են ընկնում Շիրակավանից հայտնաբերված լայնաբերան կարասի շուրթի բեկորները՝ ներսի կողմից զարդարված սյուժետային պատկերով, որն առայժմ իր տեսակի մեջ եզակի է: Այս սյուժեի խորակոս, ազատ ոճով կատարման եղանակը մոտենում է խորակոս-փորագիր ժայռաքանդակներին: Նույնը կարելի է համեմատել ուշ բրոնզեդարյան գոտիների պատկերների հետ: Նմանատիպ լայնաբերան կարասներում պահվել է ընդեղեն, հատկապես՝ ցորեն, որի կարևորագույն նշանակությունն անառարկելի է: Այն իր կիրառական առումով (ընդեղեն ամբարելու)՝ լիովին համադրվում, լրացնում է նույն կարասի պատկերագիրը՝ գարուն ավետող սյուժեն:

Բանալի բառեր. *վաղբրոնզեդարյան մշակույթ, զարդամոտիվներ, կուր-արաքսյան խեցեղեն:*

Anna Azizyan

Institute of Archaeology and Ethnography, NAS RA

Remarks on the Rare Ornaments of Kura-Araxes Ceramics of Armenia

The article is about the rare decorations of the pottery existed in the Early Bronze Age culture. Certain examples are known from Aragats, Karnut, Harich, Mets Sepasar, Shengavit, Shirakavan, Jradzor, Fioletovo, and Keti archaeological sites. The ornaments of this unique specimens are made with grooves and reliefs, by pressing-dimpling, also by smoothening and painting. These ornaments present on jugs, jars, bowls, plates and other types of vessels. Among the series of studied ornaments, there are fragments of a lip of wide-mouthed pot discovered in Shirakavan, which are decorated inside with a subject matter image; this is a unique specimen known so far. The deep-groove method and freestyle performance of the above-mentioned subject image remind deep-groove-carved rock art existing in the region. The same decoration can be compared to the images on the Late Bronze Age belts. Supposedly grains, particularly cereals were stored in such wide-mouthed jars. The supposition about grains storage is supported by the pictogram-subject of the container, which may be interpreted as the arrival of spring.

Key words: *Bronze Age, ornaments, ceramics.*

Анна Азизян

Комментарии к редко встречающимся орнаментам на куро-аракской керамике

Статья посвящена редко встречающимся подходам орнаментирования в культуре эпохи ранней бронзы. Такие орнаменты встречаются в нескольких памятниках эпохи ранней бронзы (Арагац, Карнут, Арич, Мец Сепасар, Шенгавит, Ширакаван,

Джрадзор, Фиолетово, Кети). Эти орнаменты углубленнные, релиефные, исполненные при помощи техники надавливания, а также полирования и росписи. Большой интерес из себя представляет орнамент из Ширакавана, которая по способу исполнения приближается к наскальным скульптурам.

■■■

Բազմազան են վաղբրոնզեդարյան խեցեղենի զարդամոտիվները և նրանց զարդարման մոտեցումները, որոնց տարրերն ու տարատեսակները առկա են անոթի պարանոցի, ուսի և իրանի հատվածներում[1]: Հազվադեպ են անոթի արտաքին՝ նստուկի մակերեսին և անոթի ներսի՝ ընդհանուր, հատակին և շուրթին կատարված զարդամոտիվների տեղադրումը:

Հոդվածը նվիրված է այս մշակույթում հազվադեպ հանդիպող զարդարման մոտեցումներին: Նման օրինակներ առայժմ մեզ հայտնի են Արագածից, Կառնուտից, Հառիճից, Մեծ Սեպասարից, Շենգավիթից, Շիրակավանից, Ձրաձորից, Ֆիոլետովոյից, Քեթիից: Այս եզակի օրինակների զարդաձևերը ակոսային են, ռելիեֆ, կատարված են սեղմելու-փոսիկավորելու նաև կոկման և գունազարդ եղանակներով: Պատկերվել են կարասների, կճուճների, քրեղանների, թասերի և այլ տիպի անոթների վրա: Ներկայացվածների շարքում աչքի են ընկնում Շիրակավանից հայտնաբերված լայնաբերան կարասի շուրթի բեկորները՝ ներսի կողմից զարդարված սյուժետային պատկերով, որն առայժմ իր տեսակի մեջ եզակի է:

Զարդարված օրինակները բաժանվել են երկու խմբի՝ զարդաձևեր պատկերված անոթի *արտաքին* և *ներքին* մակերեսներին, որոնք իրենց հերթին տրոհվում են ենթախմբերի.

Անոթի արտաքին մակերեսին կատարված զարդամոտիվներ

Հատակին. Վաղ բրոնզի որոշ հուշարձաններից մեզ հայտնի խեցանոթների նստուկները երբեմն զարդարված են կլոր սեղմելու-ներճկումով (Խանզադյան 1967: աղյուսակ XIV; Sagona 1984: fig. 7/4, fig. 9/5; Куфтин 1944: 97, 118), (աղյուսակ I, նկար 1-4): Հանդիպում են մեծ մասամբ նեղ նստուկ ունեցող անոթների վրա: Նրանք իրենց կատարումով աղերսվում են նույն մշակույթի կավանոթներին պատկերված, կլոր կամ օվալաձև ներճկված փոսիկների հետ (աղյուսակ I, նկար 4): Նմանատիպ զարդամոտիվներ՝ զուգորդված վերադիր ելուստով, հանդես են գալիս խեցանոթի արտաքին մակերեսին՝ իրանի վրա, որոնք բնորոշ են էլառ-արագածյան խմբին: Պատկերվում են նաև կանթի տակ և վերնամասում: Կան նաև եզակի հանդիպող՝ ակոսազարդ ու կոկման եղանակներով զարդարված նստուկներ (աղյուսակ I, նկար 5, 7, 9-11), որոնցում

1 Իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում պ.գ.թ. Ա.Գևորգյանին՝ Ֆիոլետովոյի (աղյուսակ I, նկար 2, 5, 25, 26), պ.գ.դ. Ռ.Բադալյանին՝ Կառնուտի (աղյուսակ I, նկար 3, աղյուսակ II, նկար 6), պ.գ.թ. Լ.Եգանյանին՝ Մեծ Սեպասարի (աղյուսակ II, նկար 9), ԷՊԱԹ-ի տնօրեն Ա. Թադևոսյանին՝ Արագածի (աղյուսակ II, նկար 1, 7) հնագիտական նյութերից օգտվելու թույլատվության համար նաև պ.գ.թ. Ա.Բոբոխյանին՝ օգտակար դիտողությունների համար:

պատկերված են ցանցկեն և այլ տիպի (Summers 2014: 157) մոտիվներ: Պետք է նշել, որ անոթների հատակին զարդի առկայությունը, ի տարբերություն վաղ բրոնզի, գոյություն է ունեցել նաև էնեոլիթյան դարաշրջանի որոշ հուշարձաններում (Թորոսյան 1976: 95/17, 99/18; Chataigner 1995: 109/4, 5; Мунчаев, Мерпет 1981: 213; Археология СССР 1982: 157), (աղյուսակ I, նկար 13, 16, 17): Զարդարման այս ոճը, ըստ դիտարկման, ունի երկու տարբերակ. առաջինը՝ անոթի պատրաստման ընթացքում հում (չթրծած), խոնավ անոթը դրել են գործվածքի վրա, որի արդյունքում ի հայտ են եկել որոշակի դաջվածքներ, ինչպիսիք են խեցեղենի ձևավորման ժամանակ իրանի մակերեսին պահպանված գործվածքի կամ խսիրի դաջվածքի հետքերը (Թորոսյան 1976: 99/18; Кинк 1976: 14, 22): Երկրորդը՝ վերը նշվածին զուգահեռ՝ մտադրված կերպով զարդարելն էր. վառ օրինակներն են տերևի դաջվածքներով նստուկները (Chataigner 1995: 89, 109/5), (աղյուսակ I, նկար 17): Մյուս օրինակներում պատկերված են ցանցկեն մոտիվներ՝ կրկնօրինակելով գործվածքներին (Խանզադյան 1967: աղյուսակ XXV; Шенгавит каталог 2015: 117): Անոթների նստուկները, մտադրված կերպով զարդարված լինելուց բացի, կարող էին ունենալ պահպանողական խորհուրդ նաև խորհրդանշեին պատկանելիությունը տվյալ վարպետին կամ համայնքին (Кинк 1976: 21; Խանզադյան, Մկրտչյան, Պարսամյան 1973: 134): Նմանատիպ զարդամոտիվներ մեզ հայտնի են Հայկական լեռնաշխարհի և Իրանական սարահարթի որոշ դրոշմիչ կնիքների վրա: Կավանոթների նստուկների մոտիվները գրեթե նույնությամբ զուգորդվում են կնիքների պատկերներին (Խանզադյան, Մկրտչյան, Պարսամյան 1973: նկար 134, 135; Փիլիպոսյան 1998: աղյուսակ 4, 5, 6), (աղյուսակ I, նկար 6, 8, 14, 15): Ըստ Խանզադյանի՝ հավանաբար որոշ կնիքներ՝ փորագիր զարդերով, կիրառվել են սրբազան հաց դաջանախշելու համար (Խանզադյան, Մկրտչյան, Պարսամյան 1973: 134, 135): Հաջորդ դարաշրջանում՝ միջին բրոնզում, այս զարդարման մոտեցումը նույնպես հազվադեպ բնույթ է կրում (Хачатрян 1975: 116), (աղյուսակ I, նկար 18): Ի տարբերություն վերը նշվածի՝ նման երևույթը լայն տարածում է ստանում ուշ բրոնզե և վաղ երկաթե դարաշրջանում (Խանզադյան, Մկրտչյան, Պարսամյան 1973: 37; Եսայան 1976: 124, 126, 150; Խանզադյան 1979: 96; Петросян 1989: 74, табл. 66/12; Хачатрян 1975: 192, 193, 195), (աղյուսակ I, նկար 19-21): Հատկանշական են նստուկին պատկերված մոտիվները, որոնք համահունչ են՝ կրկնելով իրանի զարդամոտիվները:

Անոթի ներքին մակերեսին կատարված զարդամոտիվներ

Ընդհանուր. Ինչ վերաբերում է կավանոթի ներսի մակերեսը զարդարելուն, մեզ հայտնի վառ օրինակներից է Շենգավիթի թասը (Սարդարյան 1067: 187; Հայացք բրոնզի դարից 2010: 41), (աղյուսակ I, նկար 22): Արտաքինից սև, փայլեցված, շուրթին՝ երկրաչափական, զարդագոտիով, ներսից՝ բաց հիմնագույնի վրա աղյուսագույն անգոբով պատկերված կոմպոզիցիա: Շարժում ցույց տվող, դեպի ձախ պտտվող թռչուններից (հավանաբար՝ արագիլներ) մի քանիսը օձերին կտցած պտույտ են գործում «օջախի» շուրջը, որոնց ուղեկցում են աստրալ նշաններ՝ կեռխաչը և լուսինը խորհրդանշող շրջանակներ (Խան-

զադյան 1969: 155, 156): Նույն հուշարձանից հայտնի են ևս մի քանի գունազարդ օրինակներ (Шенгавит каталог 2015: 238), որոնք նույնպես պատկերված են աղյուսագույն անգոբով բաց հիմնագույնի վրա (աղյուսակ I, նկար 23, 24): Փոքրիկ թասիկի կենտրոնում պատկերված է չորս թերթանի «ծաղիկ», որն աղերսվում է հավասարաթև խաչին՝ կենտրոնում կրելով փոքրիկ խաչ: Մյուս բեկորի ներսի մակերեսին պահպանվել է գալար, որը շատ տարածված մոտիվ է կուր-արաքսյան մշակույթում:

Հատակին. Եզակի, մեզ հայտնի այս օրինակներում (աղյուսակ I, նկար 25, 26), հատակի կենտրոնական հատվածում՝ ներճկումով պատկերված են կլոր փոսիկներ, որոնց զուգահեռները նույնպես գտնում ենք տվյալ մշակույթի կավանոթների իրանին, օջախների մակերեսին և արձանիկների վրա: Ուշագրավ է, որ մեզ հայտնի այս երկու օրինակները ի հայտ են եկել նույն հուշարձանից՝ Ֆիոլետովոյից: Կլոր փոսիկների պատկերներ հայտնի են Հայկական լեռնաշխարհի տարբեր հուշարձաններից, որոնք պատկերվել են ժայռերի, կոթողների և առանձին քարերի վրա (Карапетян, Хачатрян, Канецян 2004: /2, 260, 261): Կուր-արաքսյան խեցեղենի զարդարված, զույգ ներճկված փոսիկները հավանաբար կապված են ինչ-որ պաշտամունքային պատկերացումների հետ (Խանզադյան 1969: 156, 157):

Շուրթին. Վերը նշված գունազարդ նմուշներից, կավանոթների ներսի մակերեսին՝ շուրթին, ժապավենաձև գունազարդման մոտեցումը լայն տարածում ունի Արագածի, Շենգավիթի, Կառնուտի և այլ հուշարձաններում (աղյուսակ II, նկար 1-6): Գունազարդել են անգոբի տարբեր երանգներով, կավե հեղուկ քսուքով, այնուհետև՝ արտաքին մակերեսի նման հղկել կամ փայլեցրել են: Գույները տատանվում են մուգ մոխրագույնից մինչև գորշ և աղյուսակարմրավունից մինչև օխրայի երանգները: Կան նաև բաց մանուշակագույն և արծաթափայլ օրինակներ: Անգոբապատ ժապավեններն ունեն մոտավորապես 6-1սմ լայնություն:

Բացի գունազարդ նմուշներից, եզակի են այս խմբում դասված ակոսազարդ և վերադիր կատարումով օրինակները: Արագածից հայտնաբերված կուր-արաքսյան վաղ փուլին պատկանող թասը հարդարված է ակոսազարդ, զույգ շեղ գծերից եռանկյունիններ կազմող ֆրիզով (աղյուսակ II, նկար 7ա, բ): Հաջորդ հետաքրքիր նմուշը Քեթիի №9 դամբարանից գտնված բիկոնիկ իրանով կճուճն է (Петросян 1989: 45, табл. 34), (աղյուսակ II, նկար 8): Իր բավական լայն, հարթ պսակի վրա առկա է երկրաչափական ակոսազարդ ֆրիզ, որն իր հորինվածքով նմանվում է վերը նշված Արագածի թասի զարդագոտուն: Վերադիր կատարումով առայժմ հայտնի է միայն Մեծ Սեպասարից պեղված խեցու շուրթի բեկորը (աղյուսակ II, նկար 9): Այն իր վրա կրում է գալարվող վերադիր ելուստ, ըստ Լ. Եգանյանի՝ վերադիր օձագալար է պատկերված շարժական օջախ-զոհարանի շուրթին (Եգանյան 2013: 61, աղյուսակ I-7): Մյուս երեք խեցեղեն օրինակների զարդամոտիվները վկայված են բացարձակապես մեծ կարասների շուրթերին. մեկն ամբողջական պահպան-

ված կարաս է, իսկ մյուս երկուսը՝ բեկորային: Կարասներ և նրանց բեկորներ հայտնաբերվել են գրեթե բոլոր վաղբրոնզեդարյան բնակավայրերում: Հարկ է նշել, որ երեք կարասների շուրթերը ակոսազարդ են: Ակոսազարդումը կատարվել է հետևյալ մոտեցումով. հաճախ առանց ուրվագծելու միանգամից կիսաչոր կավի մակերեսին ակոսներ են փորագրվել: Այս եղանակով կատարված զարդաձևերը հիմնականում ազատ ոճով են պատկերված և տարբերվում են ռելիեֆ և ներճկված եղանակներից, որոնք ավելի կանոնավոր են: Հառիճից հայտնաբերված ամբողջական սև փայլեցված կարասն ունի լայն, քիչ դեպի դուրս ճկված շուրթ, կարճ վիզ և ուռուցիկ իրան, որն ավարտվում է կտրուկ, նեղ նստուկով (Хачатрян 1975: 60), (աղյուսակ II, նկար 10): Կարասի շուրթը ներսի կողմից հարդարված է լայնակոս եռանկյունաշար գոտիով: Այս տիպի զարդագոտիները լայն տարածում ունեն կուր-արաքսյան մշակույթում: Հաջորդ օրինակը Ջրաձորի լայնաբերան կարասի շուրթի բեկորն է, որի ներսի մակերեսին առկա են շեղ անկանոն ակոսներ (Badalyan, Avetisyan 2007: 127/7), (աղյուսակ II, նկար 11): Նույն պատկերման մոտեցումը տեսնում ենք որոշ կնքադրոշմների վրա փորագրված (Փիլիպոսյան 1998: Աղյուսակ 23/1, 2, աղյուսակ 25/5), (աղյուսակ II, նկար 12, 13):

Այս շարքի հատկանշական գտածոներից է Շիրակավանից հայտնաբերված մեծ կարասի վերնամասի բեկորային հատվածը, որի շուրթի տրամագիծը կազմում է 53 սմ[2]: Ունի դեպի դուրս ճկված շուրթ և արտահայտված պսակ: Շրթնաբեկորը ներսից զարդարված է շուրջանակի, խորակոս հորինվածքի պատկերագրությամբ, որտեղ ներառված են մարդ, լեռներ և թռչուն (հավանաբար՝ արագիլ)՝ իրենց ուղեկցող նշաններով (Azizyan 2015: table XXVIII fig. 1), (աղյուսակ II, նկար 14): Սյուժեում պատկերված թռչունը նման է արագիլի՝ եռանկյունաձև մարմնով, համեմատ իրանի՝ երկար ոտքով (աղյուսակ II, նկար 14ա): Եռանկյունաձև մարմինը բնորոշ է կուր-արաքսյան մշակույթում պատկերվող գրեթե բոլոր թռչուններին (Խանզադյան 1969: 53, 78, 79, 80; Sagona 1984: fig. 122/248, 249a, fig. 123/259, 260, 270; Куфтин 1944: рис. 55; Хачатрян 1975: рис. 21, 24), (աղյուսակ II, նկար 15, 17): Նույնը տեսնում ենք Գեղամա լեռների ժայռապատկերներում (Մարտիրոսյան, Իսրայելյան 1971: 147, 148), (աղյուսակ II, նկար 16): Թռչունը հանդես է գալիս որպես արևի խորհրդանիշ, գարուն ավետող (Խանզադյան 1969: 152, 154. Մարտիրոսյան 1981: 46), ունի նաև պտղաբերության խորհուրդ (Խանզադյան 1969: 156; МНМ 1992: т. 2, 346). նույնն է խորհրդանշել նաև բազմաթիվ հին ժողովուրդների մոտ (Пиотровский 1949: 93; Голан 1993: 100): Հայկական լեռնաշխարհի վաղ երկրագործների կողմից արևը երկրպագվել է հողագործության համատեքստում (Մարտիրոսյան 1981: 65):

Մարդն ուղղված է դեպի թռչունը, որը պատկերված է սխեմատիկ՝ երկրաչափական եռանկյունաձև մարմնով: Մարդը նույնպես երկրաչափական ձևով է պատկերված. ունի եռանկյունաձև գլուխ և ուղղանկյուն մարմին և կատարմամբ համահունչ է եռանկյունաձև մարմնով թռչունին (աղյուսակ II, նկար 14բ):

2 Հայտնաբերվել է Շիրակավանի 1978 թ. պեղումների ժամանակ, I կացարանից, հնագետներ՝ Թորոսյան Ռ., Խնկիկյան Օ. և Պետրոսյան Լ.:

Կուր-արաքսյան մշակույթում մարդակերպ պատկերները հազվադեպ են. հանդիպում ենք արձանիկների տեսքով և խեցեղենին՝ մարդու դիմային ոճավորված կատարումով: Երկրաչափական կառուցվածք ունեցող անտրոպոմորֆ պատկերները բնորոշ են վաղբրոնզեդարյան դարաշրջանին (Փիլիպոսյան 1998: աղյուսակ 41/10; Մարտիրոսյան 1981: սիստեմ. աղյուսակ III; Пиотровский 1949: табл. 9), (աղյուսակ II, նկար 20): Ինչ վերաբերում է խեցանոթների զարդապատկերներին, ապա այստեղ եզակի բնույթ են կրում: Այս հորինվածքում մարդու ձեռքին և իրենից քիչ այն կողմ պատկերված են ուղղանկյունիներ՝ մեջտեղից խաչաձև չորս մասի բաժանված, որոնք իրենց կառուցվածքով նմանվում են Միջագետքից հայտնաբերված կնիքների պատկերագրության մեջ առկա նմանատիպ նշաններին (Collon 2001: pl. X-123; Ward 1910: fig. 723), (աղյուսակ II, նկար 18, 19): Քառակուսին՝ մեջտեղից բաժանված չորս մասի, խորհրդանշել է «արտի չորս հողատարածքներ» (Голан 1993: 87): Ամիրանիս Գորայի խեցեղենի զարդամոտիվներում հանդիպում ենք ուղղանկյունաձև ցանցկեն մոտիվ, որը խորհրդանշել է «հող, արտ՝ բաժանված հատվածների» (Шаншашвили 1999: 33, 34 табл. II/VIII): Ուշագրավ են Սյունիքի ժայռապատկերներում նմանատիպ հորինվածքները (Կարախանյան, Սաֆյան 1970: 59/7, 188/1, 249/2):

Պատկերաշարի հաջորդ անբաժան մասն է կազմում եռանկյունաշար «լեռնաշղթան» (աղյուսակ II, նկար 14գ), որը նույնպես իր զուգահեռ ունի միջագետքյան պատկերագրության մեջ (Փիլիպոսյան 1998: Աղյուսակ 22/3), (աղյուսակ II, նկար 21): Շատ մշակույթներում հաճախ եռանկյունիների և շևրոնների միջոցով են արտահայտել լեռը կամ «լեռնաշղթան» (Մարտիրոսյան 1978: 105, աղյուսակ XIX; MHM 1991: т.1, 273): Լեռան բազմախորհուրդ իմաստներից մեկն աշխարհի մոդելն է: Այս պատկերաշարն իր փոխկապակցվածությամբ հնարավոր է գարունն ավետող գաղափարի շուրջ ընկալվի: Մարդը ձեռքին բռնած մեջտեղից խաչվող քառանկյուն իրով՝ փոխկապակցվում է թռչնի և լեռների հետ: Հայ ժողովրդական բանահյուսության մեջ պահպանվել են մարդու, թռչնի ու գարնան ավետումը համադրող հեքիաթներ և հանելուկներ:

Եզրակացություն

Կուր-արաքսյան խեցեղենի տեսականիում հանդիպում են անոթի արտաքին և ներքին մակերեսներին կատարված յուրահատուկ և հազվադեպ հանդիպող զարդամոտիվներ (նստուկներին, արտաքին սև փայլեցված մակերեսին, շուրթին): Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Շիրակավանի կարասի պատկերագիր զարդագոտին, որն առայժմ հայտնի է որպես եզակի օրինակ: Այս սյուժեի խորակոս, ազատ ոճով կատարման եղանակը մոտենում է խորակոս-փորագիր ժայռաքանդակներին: Նույնը կարելի է համեմատել ուշ բրոնզեդարյան գոտիների պատկերների հետ: Նմանատիպ լայնաբերան կարասներում պահվել է ընդեղեն, հատկապես՝ ցորեն (Խանզադյան 1967, 62), որի կարևորագույն նշանակությունն անառարկելի է: Այն իր կիրառական առումով (ընդեղեն ամբարելու)՝ լիովին համադրվում, լրացնում է նույն կարասի պատկերագիրը՝ գարուն ավետող սյուժեն:

Գրականություն

***Եգանյան Լ.* 2013.**
Մեծ Սեպասարի օջախ-զոհարաններ: Գյումրի, ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, գիտական աշխատություններ, ժող. XVI, 56-62:

***Թորոսյան Ռ.* 1976.**
Թեղուտի վաղ երկրագործական բնակավայրը (մ.թ.ա. IV հազարամյակ): Երևան. ԳԱԱ:

***Թորոսյան Ռ., Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ.* 2002.**
Հին Շիրակավան (1977-1981 թթ. պեղումների արդյունքները): Երևան. «Գիտություն»:

***Խանզադյան Է.* 1967.**
Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ.թ.ա. III հազարամյակում: Երևան. ԳԱ:

***Խանզադյան Է.* 1969.**
Գառնի IV: Հնագիտական պեղումները Հայաստանում: 12, Երևան. ԳԱ:

***Խանզադյան Է., Մկրտչյան Կ., Պարսամյան Է.* 1973.**
Մեծամոր: Երևան. ԳԱ:

***Խանզադյան Է.* 1979.**
Էլառ-Դարանի: Երևան. ԳԱ:

***Կարախանյան Գ., Սաֆյան Պ.* 1970.**
Սյունիքի ժայռապատկերները: Երևան, ԳԱ:

***Հայացք բրոնզի դարից* 2010.**
Գտածոներ Հայաստանի բրոնզեդարյան դամբարաններից, կատալոգ-ալբոմ: Երևան, ՀՊԹ:

***Մարտիրոսյան Հ., Իսրայելյան Հ.* 1971.**
Գեղամա լեռների ժայռապատկերները: Երևան. ԳԱ:

***Մարտիրոսյան Հ. Ա.* 1978.**
Գիտությունն սկսվում է նախնադարում: Երևան. Սովետական գրող:

***Մարտիրոսյան Հ. Ա.* 1981.**
Գեղամա լեռների ժայռապատկերները: Երևան. ԳԱ:

***Սարդարյան Ս.* 1967.**
Նախնադարյան հասարակությունը Հայաստանում: Երևան. ԵՊՀ, «Միտք»:

***Փիլիպոսյան Ա.* 1998.**
Հայկական լեռնաշխարհի կնիքները հին արևելքի կնքագործության համակարգում, ՀՀ Գ ԱԱ, Երևան. «Վան Արյան»:

***Azizyan A.* 2015.**
Preliminary Notes on Bird in Symbolic System of the Kura-Araxes Culture of Armenia. Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies, 9(2), 31- 36.

***Badalyan R. S., Avetisyan P. S.* 2007.**
Bronze and Early Iron Age Archaeological Sites in Armenia. BAR International Series, 1697, Oxford.

***Chataigner C.* 1995.**
La Transcaucasie au Nnolithique et au Chalcolithique, Maison de L'Orient Mnditerrannen. BAR International Series, 624, Oxford.

***Collon D.* 2001**.
Cataloque of the Western Asiatic Seals in the British Museum, Cylinder Seals V Neo-Assyrian and Neo-Babylonian periods, London, the Trustees of the British Museum.

***Sagona A.** 1984.*
The Caucasian region in the Early Bronze Age. BAR International Series, 214, Oxford.

***Summers G. D.* 2014.**
The Early Trans-Caucasian Calture in Iran: Perspectives and Problems, Palnorient, Revue pluridisciplinaire de prnhistoire et protohistoire de l'Asie du Sud-Ouest et de l'Asie central, CNRS ÉDISIONS: Paris, 155-168.

***Ward W. H.* 1910.**
The Seal Cylinders of Western Asia, published by the Carnegie Institution of Washington.

***Археология СССР* 1982.**
Энеолит СССР. Москва: Наука.

***Голан А.* 1993.**
Миф и Символ. Москва: изд. Известия.

***Есаян С. А.* 1976.**
Древняя культура племен северо-восточной Армении (III-I тыс. до н. э.). Ереван: АН Арм ССР.

***Карапетян И., Хачатрян Ж., Канецян А.* 2004.**
Доурартский Армавир (III-начало I тыс. до н. э.). Ереван: ИФЖ/2, 254-275.

***Кинк Х. А.* 1976.**
Художественное ремесло древнейшего Египта и сопредельных стран. Москва: Наука.

***Куфтин Б. А.* 1944.**
Урартский «колумбарий» у подошвы Арарата и Куро-аракский энеолит, Вестник Гос. Музея Грузии т. XIII B, Тбилиси.

***МНМ* 1991**
Мифы народов мира. Энциклопедия, т. 1. Москва: С. Э.

МНМ 1992
Мифы народов мира. Энциклопедия, т. 2. Москва: С. Э.

***Мунчаев Р. М., Мерпет Н. Я.* 1981.**
Раннеземледельческие поселения Северной Месопотамии. Москва: Наука.

***Петросян Л. А.* 1989.**
Раскопки памятников Кети и Воскеаска (III-I тыс. до н. э.). Ереван: АН АрмССР.

***Пиотровский Б. Б.* 1949.**
Археология Закавказья, С древнейших времен до I тыс. до н. э. Ленинград: ЛГОЛУ.

***Хачатрян Т.* 1975.**
Древняя культура Ширака III-I тыс. до н. э. Ереван: ЕГУ.

***Шаншашвили Н.* 1999.**
Знаки и символы на керамике куро-аракской культуре. Тбилиси: АНГ, центр археологических исследований.

***Шенгавит* 2015.**
Каталог археологических материалов из коллекции Музея истории Армении, составители Бадалян Р. и др. Ереван: МИА.


I
1
2
3
4
5
6
7
8
9
10
11
12
13
14
15
16
17
18
19
20
21
22
23
24
25
26


II
1
2
3
4
5
6
p
8
9
10
7ш
11
12
13
17
18
19
20
16
14ш
14p
14q
21
15
14

Աղյուսակների ցուցակ

I.

նկար 1. Շենգավիթ, Sagona A. 1984: Fig. 9, 5
նկար 2, 5, 25, 26. Ֆիոլետովո, Գեվորգյան Ա. 1999 թ. պեղ. (գծանկարները՝ հոդվածագրի)
նկար 3. Կառնուտ, ՀՊԹ. ինվ. №2857/31, Բաղալյան Ռ. 1981 թ. պեղ. (լուսանկարը՝ հոդվածագրի)
նկար 4. Հացավան, Խանզադյան Է. 1967, աղյուսակ XIV
նկար 6. Թեփե Գիյան, 8. Թեփեջիկ, 12. Մեծամոր, 15. Շոշ, Փիլիպոսյան Ա. 1998, աղյուսակ 4, 5, 6
նկար 7. Շենգավիթ, Шенгавит Каталог 2015: աղյուսակ 48/473
նկար 9. Անհայտ, Խանզադյան Է. 1967, աղյուսակ XXV
նկար 10. Գոդին թեփե, 11. Թեփեջիկ, Sagona A. 1984: Fig. 56, 3, 4
նկար 13. Ալիքեմեք թեփեսի, Археология СССР 1982, աղյուսակ XLV/10
նկար 14. Թալին, Badalyan R. S., Avetisyan P. S. 2007: 247/12
նկար 16, 17. Մաշտաղ, Chataigner C. 1995, աղյուսակ 26/4, 5
նկար 18. Հառիճ, 19, 21. Արթիկ, Хачатрян Т. 1975, նկար 71, 97
նկար 20. Ագարակ (Թալին), Badalyan R. S., Avetisyan P. S. 2007: 35/1
նկար 22ա. Շենգավիթ, Հայացք բրոնզի դարից 2010: 41, 22բ. Սարդարյան Ս. 1967: 187
նկար 23, 24. Շենգավիթ, Шенгавит Каталог 2015: 238

II.

նկար 1. Արագած, Էջմիածնի պատմաազգագրական թանգարան, ինվ. №5570/6, Մուրադյան Ֆ. 2012թ. պեղ. (լուսանկարը՝ հոդվածագրի)
նկար 2, 3, 4, 5. Շենգավիթ, Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան, ինվ.1/619, 1/532, 2/11, 1/293, Սարդարյան Ս. 1967-1969, 1970թթ. պեղ. (լուսանկարները՝ հոդվածագրի)
նկար 6. Կառնուտ, ՀՊԹ. ինվ. №2995/1, Բաղալյան Ռ. 1984թ. պեղ. (լուսանկարը՝ հոդվածագրի)
նկար 7ա,բ. Արագած, Էջմիածնի պատմաազգագրական թանգարան, ինվ. №3930/6, Թորոսյան Ռ. 1980թ. պեղ. (գծանկարը և լուսանկարը՝ հոդվածագրի) գծանկարում անհավասար կիսաշրջանը համապատասխանում է բնօրինակին)
նկար 8. Քեթի, Петросян Л. 1989: 45, աղյուսակ 34
նկար 9. Մեծ Սեպասար, Եգանյան Լ. 2013, տախ. I, նկար 7
նկար 10. Հառիճ, Хачатрян Т. 1975, նկար 16
նկար 11. Ձրաձոր, Badalyan R. S., Avetisyan P. S. 2007: 127/7
նկար 12, 13. Ուր, Փիլիպոսյան Ա. 1998, աղյուսակ 23/1
նկար 14. Շիրակավան, Թորոսյան Ռ., Խնկիկյան Օ., Պետրոսյան Լ. 1977-1981 թթ. պեղ., Սարդարապատի հուշահամալիր, Հայոց ազգագրության թանգարան, ինվ. № 266-198, (գծանկարը և լուսանկարը՝ հոդվածագրի)
նկար 15. Հառիճ, Хачатрян Т. 1975, նկար 21
նկար 16. Գեղամա լեռներ, Մարտիրոսյան Հ., Իսրայելյան Հ. 1971, նկար 148
նկար 17. Արևիկ, Խանզադյան Է. 1969, նկար 75
նկար 18. Նինվե, Collon D., 2001: 70, աղյուսակ X-123
նկար 19. Անհայտ, Ward W., 1910: 241, նկար 723
նկար 20. Քարաշամբ, Փիլիպոսյան Ա. 1998, աղյուսակ 41/10
նկար 21. Ձեմդեթ-Նասր, Փիլիպոսյան Ա. 1998, աղյուսակ 22/3

ՀՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2

Հ Ա Բ Ի Տ Ո Ւ Մ

ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԵՎ ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2

Էջադրումը և ձևավորումը
Արթուր Հարությունյանի

Շապիկը՝
Ռոման Հովսեփյանի

Habitus-ի խմբագրակազմը շնորհակալություն է հայտնում ազգագրագետ, պատմական գիտությունների դոկտոր **Հարություն Մարությանին** և **Մարիամ Շահմուրադյանին**՝ խմբագրական աշխատանքներին աջակցելու և խորհուրդների համար:

Շնորհակալություն ենք հայտնում ազգագրագետ, ՀՀ ԳԱԱ թղթակից-անդամ **Լևոն Աբրահամյանին**՝ իր հեղինակած երգիծանկարները տրամադրելու համար:

Խմբագրության հասցեն՝
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ,
Հասցե՝ 0025, ՀՀ, ք. Երևան, Չարենցի փ. 15,
Habitus-ի էլեկտրոնային փոստը՝ habitus.iae.am@gmail.com
Կայքը՝ www.iae.am, www.iae.am/hy/HABITUS

Editorial office:
Institute of Archaeology and Ethnography, NAS RA.
Address: 15 Charents str., 0025, Yerevan, Armenia
Email of Habitus: habitus.iae.am@gmail.com
Web page: www.iae.am, www.iae.am/en/Habitus-2

Տպագրված է «Հայկարլի ՍՊԸ» տպարանում
Հեռ. 091 206 115

Չափսը՝ 70×100 1/16: Թուղթ՝ օֆսեթ:
16.5 տպագր. մամուլ: Տպաքանակը՝ 200 օրինակ:

PROCEEDINGS OF THE INSTITUTE
OF ARCHAEOLOGY AND ETHNOGRAPHY · 2

HABITUS · 2